

- վարդապետ Ստամպօլ. երեք եպիսկոպոս. հարիւր քահանայ կամ այլ աւելի. թող զհարեղայսն: Եւ ութսուն տուն՝ տուն տեղացի հազիւ դասնէր. բայց եկն եւ զարիւզն աւելի
- 10 քան զքառասուն հազար տուն ի Ստամպօլ, Ղալաթա եւ Սկուտարն: Քանզի յօթանախան ձէլալիքն աւիրել էին. եւ ամենեքեան հալածեալք եւ փախուցեալք անդ էին հանդուցեալք: Եւ թէ հաշուես ի Պուղտանայ մինչեւ
- 15 Ստամպօլ, պութուն Ուռումէլին մինչեւ մեծն Վանատիկ, նա չկայ քաղաք, զեղ կամ չՔալիկ, որ հայ չկենայ. որ վասն ծովացեալ մեղաց մերոց ցիրուցան եղեալ եմք ի վերայ երկրի որպէս զփոշի. փառք Աստուծոյ:
- 20 Եւ էր պատրիարզն Հայոց վարդապետ մի Կեսարացի Գրիգոր անուն, խրթնազգի եւ խստակրօն, առաքինի եւ սրբասնեալ, յոյժ իմաստուն եւ հմուտ Հին եւ Նոր Կտակարանաց, ճգնող եւ պահեցող. որ բնաւ ամե-
- 25 նելիմբ չուտէր միս եւ զինի ոչ ըմպէր, այլ չորապար զամենայն աւուրսն իւր անցուցանէր, բայց միայն ի շարաթ եւ ի կիրակէն լուծունէր ի եիւզ եւ ի պանիր, ի ձուկն, ի ձէթ եւ ի ձու. եւ յազուհացսն երկու օրն անգամ
- 30 մի ճաշակէր: Առ որ կացի ես կէս տարի մի: Եւ ունէր սա Զուղեցի աշակերտ մի բանասէր՝ անունն Մովսէս, յոյժ խոնարհ եւ հեզ,